



# ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՒԷԱՆԻ ԵՐԿԵՐԸ.—Էրատարա-  
կեց Խ. Ժամհարեանց,  
Մոսկուա տպ. Բ. Բար-  
խուդարեանի. 1897.

Ժողովրդի պարսկական լծի տակ կրած  
զարհուրելի տանջանքներին ականատես պա-  
տանին, որ պապականութեամբ էր ուսման ծառա-  
ւով բաղդի մի յաջողակ բերմամբ ընկնում է  
մի այնպիսի երոպական ուսումնաւայր, որ-  
պիսին էր Դորպատը: Ի բնէ սուր մաքով ու  
վառ երեւակայութեամբ օժտուած հայաստան-  
ցի պատանին այդ օտար քաղաքում իրեն  
տեսնում է երոպական համալսարանի ու-  
սուցչապետների շրջանում, որոնք նախ քան  
պատուական գիտնական լինելը՝ պատուական  
մարդիկ են ներկայանում իրենց բարեսրտու-  
թեան և օրինակելի մարդասիրութեան վրայ  
սքանչացած Սաշատրին: Սոքա կարծես իսկոյն  
ճանաչում են իրենց բարեկամութեանն ա-  
պաւինած օտար պատանու հոգին, կարծես  
զգում են թէ ինչ կոչման համար է ստեղ-  
ծուած նա, և իրենց հոգածութեանը՝ նորա  
մտաւոր ու բարոյական զարգացման մասին՝  
սկզբիցն իսկ տալիս են այն ուղղութիւնը՝ որ  
ապագայում ձկնէր հայաստանի—ի նման  
պտուղ պիտի տար:

Մեր ձեռքը չեն հասել այնպիսի տեղեկու-  
թիւններ, որ վերաբերում են Արովեանի Դորպա-  
տում անցրած տարիներին. քիչ բան գիտենք  
նորա մասնաւոր կեանքից, աւելի քիչ՝ նորա  
պարապմունքներից: Սակայն ուսումնաւարտ և  
հայրենիք վերադարձած Արովեանին ճանա-  
չող բոլոր ազգայինների և երոպացի ուսում-  
նականների մեզ հաղորդած տեղեկութիւն-  
ներից այնքանը հաստատ խմանում ենք, որ  
Ս. Լճիկանի տիրացու Սաշատուրը վերա-  
դառնում է Դորպատից հոգեւորապէս վերածըն-  
ուած: Համալսարանական գիտութիւնից զատ՝  
Արովեանը իւր հետ բերում է անշուշտ ե-  
րոպական գրականութեան, մասնաւորապէս

գերմանական բանաստեղծութեան հիմնաւոր  
Ժանօթութիւն: Եթէ վաղների ներկայու-  
թեամբ Արովեանի աշակերտները Դեօթէի և  
Շիլլերի գրուածքներն են կարդում գերմա-  
ներէն, ինչ կասած, որ բանաստեղծական  
հոգու տէր Սաշատուրն ինքը Դորպատում  
ոգեւորւել է համաշխարհային բանաստեղծու-  
թեան պատմութեան մէջ փայլող այդ հսկայ  
հանձարների արտագրութիւններով: Արով-  
եանի աշակերտները Թիֆլիսում «ոռւսի»  
նէմեցի Փրանցուզի լեզուում ինչ բան որ  
կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին  
էնպէս բաները դիր գալիս: Եւ որ նախ իրեն՝  
ուսուցչին են «էնպէս» բաները դիր եկել՝ իւր  
ուսանողութեան միջոցին: Հարկաւ առաջ  
ինքն Արովեանն է կարգացել «էն լեզվներ-  
ում» երեւելի մարդկանց դարձքերը, նրանց  
արածներն ու ասածները, նա կարգացել է  
«էն» բաները, որ մարդի սիրտ կարող է զրաւիլ  
չունքի սրտի բաներ են՝ ով չի սիրիր:

Արգ՝ ինչ «սրտի բաներ» էին հրապուրել  
Արովեանին Դորպատում, ինչպիսի ազդեցու-  
թեան տակ կարող էին զարգանալ այնտեղ  
նորա բնատուր ձիւքերը: Դարուս առաջին քա-  
ռորդի վերջում՝ գերմանական գրականու-  
թիւնը, որի ազդեցութեանն Արովեանն ան-  
շուշտ աւելի պիտի ենթարկուէր իւր կեանքի  
պայմանների համեմատ, կատարեալ զարգաց-  
ման էր հասցրել այն բոլոր տարրերը, որ  
հանրամարդկային նշանակութիւն ստանա-  
լով՝ ուղղութիւն էին տալիս բոլոր երոպա-  
կան գրականութիւններին: Մի կողմ թող-  
նելով գեռ Sturm und Drang-ի յառաջ բե-  
րած ահագին մտաւոր շարժումը և առանձ-  
նապէս բանաստեղծութեան անօրինակ ծաղ-  
կիլը, որ անցեալ դարու երկրորդ կիսիցն  
սկսուեցաւ, նոյն իսկ այս դարու սկզբներում  
մի խոշոր քաղաքական երեւոյթ մեծ զարկ  
տուաւ գերմանացոց ազգային ինքնագիտակ-  
ցութեան զարթնելուն, որ և անմիջապէս իւր  
հետեանքն ունեցաւ գրականութեան նկատ-  
մամբ: Մապօլէօնի աշխարհակալ ձգտումները,  
նորա բռնութեան՝ երոպական ազգերի վրայ  
ծանրացած շղթաները, նորա երազները՝ իւր  
զխաւորութեամբ մի ընդհանուր Եւրոպական  
կայսրութիւն ստեղծելու մասին՝ կարծես մի

անգամից սթափեցրին գերմանացոց, զարմանալի ուժով կենդանացաւ այդ ժողովրդի ազգայնութեան զգացումը, ազգային արժանապատուութեան, ազգային պատմական քաղաքակրթութեան դիտակցութիւնը, և այդ հօր զգացմունքը գնալով աւելի աճեց Նապօլէօնի անկումից յետոյ: Զարգացաւ գրականութեան այն ուղղութիւնը, որ յայտնի է ռումանտիզմ անուամբ և որի էութիւնն իրօք այդ ազգայնութեան, ազգային ինքնաճանաչութեան գաղափարն է. առաջնակարգ գիտնականներ և տաղանդաւոր բանաստեղծներ, կարծես ցոյց տալու համար թէ գերմանացին օտարի ստրուկ լինելու արժանի ազգ չէ: Իրենց աչքը ձգում են ամէն ազգի հիմնական տարրը կազմող հասարակ ժողովրդի վրայ, երգում և ուսումնասիրում են նորա կեանքն ամէն կողմից, զիմում են նորա անցեալին, յարութիւն են տալիս մոռացուած միջին դարերին, հանգէս են բերում միջնադարեան դղեակների աւերակների տակ թաղուած ասպետներին, աւատական իշխաններին ու իրենց հպատակներին, բանաստեղծական երեակայութեան զարդերով պծնած կարծես մի կեանք են դնում հրապարակի վրայ և ասում. «այս ձերն է, ձեր հարազատ անցեալն է, որի պտուղն էք դուք» սիրեցէք ձերը, ձեր պատմական անցեալը իւր բոլոր թերութիւններովն ու առաւելութիւններով, սորան ճանաչելով դուք կը սիրէք ձեր ներկան և կը պատրաստեք ձեր աւելի փառաւոր ապագան:

Օտարութեան մէջ հայրենիքի կարօտը քաշող և նորա տառապանքներին ակնատես եղած Արովեանի սրտովը պիտի լինէր անշուշտ և բոլորական գրականութեան այդ ուղղութիւնը, և մենք կարող ենք երեակայել այն տալաւորութիւնները, այն ազգեցութիւնը, որի տակնա պիտի վերադառնար հայրենիք: Դորպատում անց կացրած տարիները բաց են անում Արովեանի աչքը, և այն ինչ որ նա առաջ թերեւս զգում էր միայն, այժմ նորա առաջ պատկերանում է իւր բոլոր մերկութեամբ, նա ըմբռնում է այն գործունէութեան խորհուրդը, որի համար առաջ գուցէ միայն անորոշ երազներ ունէր. վերջապէս նա ակնյայտնի տեսնում է, թէ որ չարիքների դէմ ամէնից

առաջ հարկաւոր է մաքաւել և ըստ այնմ որոշում է առաջիկայ գործունէութեան ասպարէզն ու գործելու եղանակը: Բայց ինչ կարող է անել մի մշակը մենակ ընդարձակ խոպան դաշտում: հայրենի կեանքը չկարողացաւ տալ նորան իւր ցանկացած ասպարէզը, և իւր կոչումից հրաժարուել չկամեցող երիտասարդն ստանձնում է պետական պաշտօն, որ սակայն կարող էր նորան հնարաւորութիւն տալ գէթ մասամբ մօտենալու իւր նպատակին: Ուսուցիչ Արովեանը իւր հօդին է կամենում ներշնչել իւր հայ սաներին, այդտեղ է ահա որ նորա «սիրտն ուզում էր պատռի, որ էս էրեխէքանց ձեռքն էլ ինչ հայի գիրք տալիս էր, չէին հասկանում»: Նւ «հայկազ զաւակը, Եջմիածնայ որդին», որ «մէկ հայ տեսնելիս» ուզում էր շունչն էլ հանի, նրան տայ, այդ զարմանալի հայրենասիրական եռանդով վառուած երիտասարդը մնում է մոլորուած թէ ինչ պիտի անէր, ինչ ելք գտնէր սիրտը կրակի պէս այրող այդ եռանդին — «լեզուն փակ, աչքը բաց, բերանը բռնած, սիրտը խոր, ձեռք պակաս, լեզուն կարճ»: «Դանձ չունէի, ասում է նա, որ գործով ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի. մեր գրքերն էլ զրաքառ, մեր նոր լեզուն էլ անպատիւ, որ սրտիս հասրաթը խօսքով յայտնէի»: Արովեանի սրտումը «կայծակն ու որոտումը մէյդան են բաց անում, բայց նա հնարաւոր ելքը գտնում է, յաղթող է դուրս գալիս հոգեկան մաքաւման միջից. տեսնելով որ Նւրոպայի «էրեխէքն էլ չօմերի, չորացի» վիրաբի Սոֆոկլէսի գրքերը գլխատակներին ունին, չունքի բոլոր աշխարհի բաներ են, Արովեանը վճռում է մի կողմ թողնել զբարբարը, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, և «անպատիւ» լեզուով մի «աշխարհի» մի «սրտի» բան գրել, վճռում է «աչրդ» դառնալ: չորով արդէն իսկ «աչրդ» Արովեանը «մունջ լեզուն բաց է անում» և հայ ազգն ստանում է «վէրք հայաստանին»:

Սովորական խօսք է դարձել այսօր ամէնքիս համար, թէ այդ «ողբը» մեր նոր գրականութեան մէջ դարապղուխ է կազմում, թէ դորանից սկսաւ և հետզհետէ աճում է մեր

արդի բանաստեղծութիւն: Եթէ ոչ բառացի, գէթ ըստ էութեան միանդամայն ծշմարիտ է այդ հայեացքը Վէլքերի մասին: Եթէ մի կողմից ընդունենք որ մեր կեանքի պատմական ընթացքը չպիտի կանգ առնէր, և մենք եւրոպական լուսաւորութեան աւազանում մկրտուելով՝ անշուշտ պիտի բռնէինք մեր ճանապարհը և հասնէինք այստեղ, միւս կողմից անուրանալի է որ այդ ճանապարհը ռուսահայոց մէջ առաջինը ոտ դրեց Սաչաուուր Աբովեանը և շարունակ յետ նայելով խրատութեան ձայնով յառաջ և յառաջ հրաւիրեց իւր յեանքից եկող ներքին: Աբովեանի ողին թեաւորեց այն բոլոր պատուական սրտերը, որոնք յառաջ բերին մեր տակաւին մանուկ գրականութիւնը և որոնցով մենք այսօր պարծնեում ենք:

Արդ՝ ինչ գիւթական զօրութեամբ կարողացաւ մի 2—300 երեսից բաղկացած զիւրք այգպիսի շարժում յառաջ բերել, ինչ է Վէլքեք հայաստանին, որ մեր արդի գրականութեան ծնող է համարուում:

Վէլքեք հայաստանի, ուր հայրենասիրի պատմական վէպ—այսպէս է կոչուում Սաչաուուր Աբովեանի հաշտաւոր զիւրքը, և այդ անուան մէջ իսկ մենք գտնում ենք այն երկու գլխաւոր կէտեր, որ զրաւում են մեր ուշադրութիւնը:

Սախ՝ Վէպ է արդեօք Վէլքեք հայաստանին: Եթէ այս հարցին պատասխանելու լինինք աչքի առաջ ունենալով գեղարուեստական քննադատութեան պահանջները և էսթետիկական տեսութիւնները բանաստեղծութեան մասին, մենք անշուշտ բացասական պատասխան պիտի տանք: առաւել ևս՝ եթէ խնդրին նայենք արդի տեսութեանց հայեցակէտից: Վիպասանութիւնը, վէպը (ռոման) այժմ այնպիսի ընդարձակ տեղ է գրաւել բոլոր ազգերի գրականութեանց մէջ, որ կարելի է համարձակ ասել իսկ բանաստեղծութեան բոլոր այլ տեսակները տեղի են տուել նորան: Վէպն այնպիսի ընդարձակ ծաւալ է ստացել, որ պարունակում է այժմ այն բոլոր տարրերը, որ առաջ բանաստեղծութեան առանձին առանձին ծիւղերի նիւթ էին դառնում: Վէպը կարողանում է ամփոփել կեանքի ամէն տեսակ երեւոյթներ, և այժմ անհարկն է

ասել թէ ինչն իսկապէս վէպի նիւթ չէ կարող լինել: Ասում ենք առհասարակ թէ պրականութիւնը, մասնաւորապէս բանաստեղծութիւնը, մի ազգի կեանքի արտայայտութիւնն է, մի հասարակութեան ծշգրիտ պատկերը: Այսպէս եղել է միշտ, և բանաստեղծութեան բոլոր ծիւղերը ամէն ժամանակ որոշ կենսական պայմանների քաղաքակրթութեան որոշ աստիճանի ազդեցին առանձնայատկութիւնների պտուղ և միւսնայն ժամանակ կենդանի պատկեր են եղել: Այժմ այս դերը կարծես ամէնից աւելի վէպին է պատկանում և ըստ այնմ էլ արդի քաղաքակրթութեան ազգերի բարդ կեանքի պայմանների համեմատ, վէպը խիստ բաղժակողմանի, բաղժատեսակ բովանդակութեամբ հարուստ մի երեւոյթ է երոպական գրականութեանց մէջ: Ինչպէս են ապրում մարդիկ, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, ինչպէս են գործում, ինչ են զգում, ինչպէս պիտի գործեն ու զգան, ինչով են հետաքրքրուում, ինչ են սպասում ինչի են ձգտում, վերջապէս այն բոլորը, թէ լաւ թէ վատ, որ ժամանակակից կեանքի բովանդակութիւնն է կազմում, այդ բոլորն, ասում ենք, այսօր աշխատում է պատկերացրել վիպասանը: Ուրեմն նա նկարագրում է մի հասարակութեան կամ ժողովրդի բարք ու վարքը, նորա առօրեայ կենացադր, նորա վշտերն ու ուրախութիւնը: հոգեբանի սրատեսութեամբ հետազոտում է առանձին անհատների ներքին աշխարհը, ականատես է դարձնում մեզ բնաւորութեանց զրամատիկական մրցման, յուզում է ողբերգական դրութեանց կապակցութեամբ, լարում մեր հետաքրքրութիւնը անցքերի մի ուշադրաւ հանգոյցով և հիացնում կամ լացացնում այդ հանդոյցը լուծելով: Կարծում ենք որ այս պահանջների մեծագոյն մասը ի զուր պիտի որոնենք Վէլքեք հայաստանին մէջ: Ժամանակակից կեանքի երկարագրութեան շատ քիչ օրինակներ է տալիս մեզ Աբովեանը: Բանաբեռի նիստ ու կացի մի քանի տեսարան, իւր հայրենի գիւղի մի քանի սովորութիւններ, և ուրիշ ոչինչ, աւելի տալիս է հայ ժողովրդեան պատմական այդ շրջանում կրած տառապանքների պատկերներ, և այն ըստ մեծի մասին

քնարերգական սրտագին զեղումներով, քան իկասանի նկարագրական լայն վրձինի հանաքար շարժումներով: Ամբողջական բնաորութիւններ, տիպարներ չենք գտնում նոյնպէս: Նոյն իսկ գլխաւոր հերոս Աղասին պատկերանում է մեր առաջ առաւելագէտ իւր բնաւորութեան մի աչքի ընկնող, հեղինակի յատուկ նպատակին ծառայող, կողմովր, քան այն ներքին, յաճախ ոչ խոշոր, հոգեկան շարժումներովր, որ անշուշտ աւելի կարող էին կենդանացնել ընթերցողի առաջ մի գիւղացի երիտասարդի ամբողջական տիպար: Բուն վէպի պատմութեան թելը յաճախ ընդհատուած է միջանկեալ կողմնակի գէպքերի, երբեմն վէպի հետ ոչինչ կապ չունեցող անցքերի նկարագրութիւններով: Կան ամբողջ երեաներ, որ բացի վէպի հետ որ և է առնչութիւն չունենալուց, բանաստեղծութեան իսկ առհասարակ չեն վերաբերում: Այս բոլորն ի հարկէ չափազանց թուլացնում է գլխաւոր պատմութեան, Աղասու վէպի տպաւորութիւնը և մենք կարող էինք ասել թէ «Վէրք Հայաստանի»-ի մէջ բազմաթիւ են այնպիսի թերութիւններ, որ իրաւունք չեն տալիս նորան «վէպ» անուանելու:

Կանգ առնենք այստեղ և, առանց վերոյիշեալ ցուցմունքները հաստատելու համար կտորներ յառաջ բերելու, ասենք որ մենք կարող ենք «Վէրք Հայաստանի»-ն վէպ ճանուանել, ընդունուած էսթետիկական պահանջներով չափել այն և խոստովանել սակայն, որ այդ գրուածքը մեր գրականութեան մէջ դարազրուի կազմելու արժանիք ունի և այսօր էր մի քանի տասնեակ տարի գրուած օրինակներէն յետոյ, ընդունակ է ոգեւորելու և դաստիարակիչ նշանակութիւն ունենալու մեզ համար:

Դրքի ներքին բովանդակութեան նկատմամբ՝ այդ նշանակութիւնը բացատրուած է իւր վերնագրի մէջ եղած երկրորդ կէտը, որ մենք ուշադրութեան արժանի անուանեցինք:

«Ողբ» այդ մի դառն ողբ է այս, որ բղխել է Արովեանի այրուած սրտից և որ արտասուքի մէջ թաթախուած գրիչը անց է կացրել թղթի վրայ: Այս հանգամանքը «Վէրք Հայաստանի»-ի յարատեւ նշանակութեան գլխա-

ւոր առհասարակ է. այս ողբն է, որով պայմանաւորուած են Արովեանի վէպի գրականական թերութիւնները, բայց և աւելի նորա արժանիքը:

Այն նուիրական ջերմ զգացմունքը, որ մեծ հայրենասիրի առաջնորդն է եղել իւր ուսանողութեան ժամանակ և յետոյ մղել է նորան գէպի հայրենի աւերակները, շունչ և կենդանութիւն է տուել «Վէրք Հայաստանի»-ի ամէն մի տողին: Այդ զգացմունքից զուրկ չեն եղել մեր յաջորդ հեղինակներն էլ, բայց այն կորովը, այն ամէն այլ հոգեկան շարժում ամէն այլ միտք, այլ շահ կլանող զօրութիւն, որով բորբոքուած է Արովեանցի զգացմունքը, անօրինակ է մեր գրականութեան մէջ: «Վէրք Հայաստանի»-ն կարգալիս մարդ զգում է, որ հեղինակը անքուն գիշերներ է լուսացրել, կարծես վախենալով թէ ժամանակ կը պակասի իւր լցուած սիրտը արտայայտելու, իւր անհուն յոյզերը գրի անցնելու, մարդ զգում է, որ «Երեսուն թաքաղէն» մի շնչով է դրուած... Զգացմունքի այդ բուռն հոսանքն է, որ անզուսպ ուժով հեղինակին առանց մի վայրկեան հանդիստ տալու, յառաջ է մղում և նա առանց յետ նայելու մերթ Արարտեան աշխարհի բնութիւնն է նկարագրում մերթ Բանաբեռի առանին նիստ ու կացը, մերթ մի սիրոյ երգ է մէջ բերում ոտանաւորով, Երեանի բերդի վերայ վշտալից խորհրդածութիւններ է անում Պարսից շահերի ու սարդաբների պատմութիւններ է հաղորդում «վայերով», «օխերով» ամբողջ երեսներ լցնում «շախսէյ—վախսէյ» է նկարագրում իւր սիրական Աղասու հետ սար ու ձոր ընկած բայաթիք է ասում... Եւ այս բոլորը խառնիխառն, իրար վրայ կուտակուած՝ այնպէս ինչպէս հեղինակի երեւակայութեան մէջ է պատկերացել յախուռն հոսանքով, այս է պատճառը, որ շատ տեսարանների միջանկեալ պատմութիւնների զոյութիւնը վէպի մէջ ոչ մի կերպով չէ արդարանում գրուածքի զեղարուեստական կամ նոյն իսկ տրամաբանական պահանջներով:

Այստեղից ահա յառաջ են գալիս և այն բազմաթիւ քնարական զեղումները, որ անմիջական արտայայտութիւն են հեղինակի

սիրաբ Երզնայ պէսպէս զգացողութեանց և որ զրբի ամենասիրուն և ամենազօրեղ էջերն են լցնում:

Եթէ կայ մի բան որ այդ բոլորին ամբողջութեան, միութեան բնաւորութիւն է տալիս, այդ կրկնում ենք: Արովեանի անձնամասնութեան հասնող հայրենասիրական խանդն է, որ և մեր կարծիքով «էկէր» հայաստանիւնի զլիաւոր արժանաւորութիւնն է և ահապէն կրթական նշանակութիւն է տալիս նորան. մարդ ահամայ խոնարհում է հօգու այն վեհութեան, այն անհայտից բացալու սիրոյ առաջ, որ բացազանչել են տալիս հեղինակին. «/վ թուր ունի/ առաջ իմ զլիս խի/ իմ սիրտս խի/ ապա թէ ոչ՝ քանի բերնումս լեզու կայ, փորումս սիրտս ևս լեզուապատառ ձէն կը տամ. «էդ ում վրայ էք թուր հանել, հայոց մեծ ազգին չէք ճանաչում»:

Արովեանի գործի մի այլ կարեւոր կողմը մենք կարող էինք պատմական անուանել մեր գրականութեան համար. այդ՝ աշխարհիկ ժողովրդին միանգամայն հասկանալի լեզուով առաջին անգամ մի այդպիսի մեծ շարադրութիւն գրելն է: Սակայն ինքն ըստ ինքեան էլ պարզ է, հեղինակը իւր բերանովն էլ է մեզ ասում, որ վերջին հանգամանքը ևս պտուղ է իւր անասհման հայրենասիրութեան:

Արովեանը խորակեց հայ ստեղծագործող միաբը կաշկանդող շղթաները, ցոյց առեց թէ ի՛նչ միջոցով կարող է զարգանալ մեր գրականութիւնը և այս նորա զլուխը պսակող փառքն է մեր արդի լեզուի ու բանահիւսութեան պատմութեան մէջ:

Մենք համառօտակի յառաջ բերինք այն տպաւորութիւնը, որ անում է մեզ վրայ Արովեանի զլուխգործոցը, և համոզուած ենք որ դեռ երկար ժամանակ այդ դիբբը հայ ընթերցողի համար ամենամաքուր ոգեւորութեան աղբիւր պիտի լինի երկար ժամանակ պիտի դաստիարակէ մեր մանուկ սերունդը:

Կը մնայ մեզ մի երկու խօսք ասել Արովեանի երկերի մեր առաջ դրած նոր հրատարակութեան մասին:

Այս ստուար (աւելի քան 550 in 8<sup>o</sup> էջ) հատորի մէջ ղեկեղուած են հետեւեալ նիւ-

թերը. Հրատարակչից, խմբագրից, Սաշատուր Արովեան (կենսագրութիւն), Վէրք Հ. Ովսանեա, Պարապ փախտի խաղալիք, Փէդոթրա, Մտածմունք ի տեսիլ Հայրենեաց, Նախաշաւիղ, Ծանապարհօրդութիւն պ. պր. Պարրոտի և Սաշատուր գպրի Արովեան, Բանաբեռի բարբառից քանի մի գիտելիքներ և բաւթերթ:

Հրատարակութիւնը կատարուած է ամենայն խնամքով ու բարեխղճութեամբ. երևում է որ խմբագրողը, պ. Ստ. Տէր Սարգսեանց, վերաբերուել է իւր գործին մեծ սիրով ու առանձին յարգանքով գէպի Արովեանի թողած գրականական դանձը: Մի բանում միայն մենք չենք համաձայնում խմբագրողի հայեցակէտին, այդ ուղղագրութեան խնդրին է: Արովեանի գործը գիտնական գործ չէ, որ լեզուագէտի ճշտութեամբ հարկաւոր լինէր ամենայն հարազատութեամբ պահպանել նորա ուղղագրութիւնը, որ թերեւս կարելի լինէր բացատրել հեղինակի տեսութիւններովը. օրինակ, ի՛նչ խորհուրդ կարող է ունենալ մի տեղ «մարգ» մի այլ տեղ «մարթ», մի տեղ «կարդալ», մի այլ տեղ «կարթալ» գրելը, քանի որ այդ ոչ որ և է հնչունաբանական օրէնքով է բացատրուում և ոչ ժողովրդի արտասանութեամբն է արդարանում ինչպէս կարծում է պ. Տէր Սարգսեանը (խմբ. դ.), ի՛նչ մեկնութիւն կարող է վերցնել «աշխար» ուղղագրութիւնը փոխ. «աշխարհ»: Զպէտքէ մոռանալ որ զուտ գրականական լեզուով գրող ու խօսող հայաստանցի (էլ չենք ասում արարատցի) հայն էլ արտասանում է «մարթ», «կարթալ», «աշխար» (հօն ոչ մի կերպ լսուել չէ կարող), և սակայն ոչ ոք չէ մտածում գրել այդպէս: Նմանապէս անհասկանալի է մեզ համար այնպիսի աշխարայ սխալներն անփոփոխ պահելն, ինչպէս՝ «հօտ», փոխ. «հոտ», «տա», փոխ. «տայ» (3 դէմքը) և այլն: Ի՛նչ կասկած որ այդ բոլորը հեղինակի զրշի սխալներ են և ուրիշ ոչինչ. նոյն խակ Արովեանի նմանագրութեան (fac—simile) մէջ որ յառաջ է բերուած այս հրատարակութեան վերջում: «Երբձանք» բառն, օրինակ, գրած է «հօով» միթէ պարզ չէ որ տպագրի մէջ (եր. 454) պէտք չէր պահպանել նոյն սխալը. ապա ին-

չու նոյն երեսում տպած է՝ «Ճնշէն» խորտակէն» մինչդեռ ձեռագրումն է՝ «Ճնշէն» խորտակէն»:

Վերջապէս ի զուր են կարծում թէ Արովանի լեզուն ամենայն ճշտութեամբ համապատասխանում է Բանաբեռի բարբառին. ջառում ենք որ յօդուածիս սահմանը թոյլ չէ տալիս մեզ յառաջ բերել «Վերք Հայաստանի»-ից բազմաթիւ բառեր, դարձուածներ և քերականական ձևեր, որոնք չեն պատահում Բանաբեռի բարբառում:

Այս փոքրիկ նկատողութիւնն այնուամենայնիւ չէ կարող արդելք լինել մեզ համար կրկնելու, որ Արովանի երկերի այս նոր ապագրութիւնը մի պատուական հրատարակութիւն է, որ պատիւ է բերում թէ հրատարակչին, թէ խմբագրողին և թէ տպարանին:

Գրասէր.

## Ս. ԼՈՒՍԱՆՈՐԻԶ ԵՆ ՏՐԻԱՏ

ԵՒ

ՆԱՅԱ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆ ԵՆԵՐԸ.

Ի՞նչ էր Հայաստանեայցս Լուսաւորչի— որոյ Հօրն մերոյ Դրիգորի անքաւելի մեղքը, որին մեր սէգն Տրդատ իբրեւ մահապարտ ճանաչելով, ուստի և նրան չարաչար պատժելու համար բարեշէն Հայաստանի մէջ ոչ մի յարմարաւոր տեղ չգտնելով, ձգել տուեց Արտաշատի անդնդախոր վիրապի մէջ: Մեր ազգային պատմութիւնների աւանդածի համեմատ ս. Լուսաւորչի այս մեծ յանցանքը, որ նոյն իսկ ինքն Տրդատ տեսաւ իւր աչքով և զարհուրեց, ահա թէ ինչ էր: Սուրբն Լուսաւորչի խմանալով իւր դայեկից, որ Տրդատի հօր՝ անմեղ Սոսորովին սպանողը եղել է իւր Անակ հայրը, Լուսաւորչի բարեգործ սրտի վերայ մեծ վերք պատճառելով իւր հօր կատարած այս մեծ անգթութիւնը, նա կամովին ձգում է իւր անձը Տրդատի արքունիքի յարկի տակ, մէն միայն հաւատարմութեամբ և միամիտ սրտով «Հայրենեայն հատուցանել պարտիս» (Սոր. Բ. գիրք. 2.):

Նւ արդարեւ երբ նա արքունիք մտած օրից իւր կամաւոր և ամբիժ ծառայութիւններով աշխատում է ջնջել իւր հօր այս ամօթալի յանցանքը և վաստակել Տրդատի սէրն, այս ժամանակ իւր և Տրդատի մէջ տեղի է ունենում մի քսամենկի դէպք, որն աւելի ծանր և ճնշիչ ներգործութիւն թողնելով նրա երկիւղած սրտի վերայ քան իւր հօր կատարած եղեռնագործութիւնը, նա սոսկում սարսափում է: Ի՞նչ էր այս դէպքը: Իւր բոլոր աշխարհով կռապաշտութեան մէջ ընկղմած Տրդատը, հրամայում է մի օր Լուսաւորչին «Պատկա և թաւ ոստա ծառոց» նուէր տանել Անահատկան պատկերին՝ սպառնալով, «Յաճախեմ քեզ նեղութիւնս բանտ և կապանք և մահ. . . եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտօն մատուցանել» (Ագաթ. 1882, Տփ. 39—40):

Կարելի բան էր քրիստոնէական կաթով սնուած և ջնտանի եղեալ դրոց Աստուծոյ» (Անդ 33) մեր հաւատաւոր Լուսաւորչին կատարել Տրդատի արձակած այս խրոխտ հրամանը. ուստի երբ նա ամենայն զօրութեամբ մի կողմից ձգնում է ցոյց տալ Տրդատին իւր պաշտած աստուածների ոչնչութիւնը, իսկ միւս կողմից ողորդական խօսքերով հրաւիրում նրան իւր պաշտած ու պատուած Սաշի և Աւետարանի տակ, թաւ ոստով և պսակով չպատուելով միանգամայն Անահատկան պատկերին, այս ժամանակ Տրդատը ոչ այնչափ Լուսաւորչի իւր արքայական հրամանը ոտնակոխ անելու, որչափ Հայոց աշխարարհի «Փառք և կեցուցիչ մեծ Անահտին» երես առ երես արհամարհելու համար, բորբոքում է մեծ սրամտութեամբ, ուստի և ի վրէժ այս բանին, չբաւականանալով նրա վերայ փորձած ամենատեսակ դառնակսկիւծ չարչարանքներով, իբրեւ իւր հայրենի աստուածներն աւարգող մահապարտ, հրամայում է ձգել նրան Արտաշատի վիրապի մէջ: Ահաւասիկ այս էր Լուսաւորչի մեղքը: Բայց երկար մնաց նա այս դժնդակ արգելարանում, այո՛, տասն և հինգ երկարաձիգ տարիներ ևս նա իւր անձը տրորելով այստեղ, ապա Աստուծոյ անսահման ողորմութեամբ և տնօրէնութեամբ նոյն իսկ իրեն վերայ աղետալի